Տ. ՇԱՀԵ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(21 օգոստոսի, 2016 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Ապաքէն դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք»
(Բ. Կորնթ Զ. 16):

Սիրելի՛ հավատացյալ քույրեր եւ եղբայրներ,

Ս. Աստվածածնի Վերափոխման տոնական նախավերջին այս օրը ամենքս կրկին հավաքվել ենք՝ ճաշակելու Տիրոջ Սրբազան Մարմինը եւ Արյունը եւ վերանորոգելու մեր ուխտը Ս. Հաղորդության կենարար շնորհով: Եւ այսօր, ինչպես բոլոր կիրակիներին, Ս. Ավետարանից առաջ ընթերցվեցին մարգարեական եւ առաքելական պատգամներ, եւ ձեզ հետ իմ այս օրվա խորհրդածության նյութը Պողոս առաքյալի նշանավոր խոսքերն են. «Չէ՞ որ դուք կենդանի Աստծու տաճարներ էք» (հմմտ. Բ. Կորնթ. Զ. 16):

Բնականաբար, մեզ համար այսօր, ժամանակի հեռավորությունից շատ դժվար կարող է թվալ, թե ինչպես մարդ առօրյա իր հոգսերի, թոհուբոհի մեջ հինգ կամ տասը րոպե անգամ չունի՝ աղոթքի կամ հոգեւոր խորհրդածության նվիրելու, էլ ուր մնաց, խոսելու մարդու եւ Կենդանի Աստծո տաճարի նույնացման մասին: Համաձայն եմ, որ ներկա պահին անցյալի իրականության հետ մեր հարաբերությունը շատ դժվար է թվում. իրատեսական չի հնչում այն, որ կարող ենք այսօր ասել, թե ունենք փառավոր, հոգեւոր սխրանքներով լեցուն պատմություն, երբ ունեինք Ս. Գրիգոր Նարեկացի եւ մյուս մեծ սրբերը: Սակայն Տերը մեզ տալիս է ուղենիշներ, նաեւ հոգեւոր խորհրդածության նյութ, որ հասկանանք, թե ինչպե՛ս հիմա՝ այս պահին, կամ սրանից հետո էլ, երբ մեզանից յուրաքանչյուրը փորձի մոտենալ Աստծուն եւ խոսել Նրա հետ, կզգա իրեն ինչպես Աստծո որդի եւ ժառանգ:

Եկե՛ք մի պահ փորձենք հասկանալ, թե ի՞նչ է տաճարն ընդհանրապես Աստվածաշնչում: Հին Կտակարանում տեսնում ենք, որ տաճարը գեղեցիկ եւ շքեղ մի կառույց է: Այն առնվազն երեք անգամ վերանորոգվեց, իսկ վերջին

վերանորոգումից հետո, որ տեւեց քառասունվեց տարի, իր գեղեցկության համար այդ տաճարն անվանում էին «սպիտակ մարգարիտ»: Ականատեսները վկայում էին, թե այնքան գեղեցիկ էր, որ արվեստի մեծ սիրահար հռոմեացիները գնահատում էին այն իբրեւ ճարտարապետության գլուխգործոց: Եւ այս նույն տաճարը, բնականաբար, մարգարեական խոսքի համաձայն, ներսում ուներ բազմաթիվ սպասներ, անոթներ, բայց դրանք բոլորն ունեին հոգեւոր նշանակություն: Եզեկիել մարգարեին Աստված տաճարից ներս մտցնելիս ասում է. «Լսի՛ր, մարդո՛ւ որդի, այն ամենը, ինչ դու տեսնում ես դռան մուտքից մինչեւ ելք, քո սրտի՛ մեջ դիր, ըստ բոլոր սրբությունների եւ ըստ չնորհի» (Հմմտ. Եզեկ. Խե. 5): Եւ ահա հենց այդ տաճարի մասին է ասում մեր Տերը. «Քանդեցե՛ք այս տաճարը, եւ ես երեք օրում կկառուցեմ այն» (Հմմտ. Հովհ. Բ. 19): Ամենքիդ էլ քաջ հայտնի է Հովհաննու Ավետարանի այդ դրվագը, երբ Նա այդ տաճարը՝ փառահեղ, շքեղ այդ շինությունը, համեմատում է Իր մարմնի հետ: Եւ ի վերջո, Պողոս առաքյալն ահա Կորնթացիներին ուղղված իր երկու թղթերում մեզ տալիս է վերջնական պատգամը. «Դուք ամենքդ կենդանի Աստծո տաճարներ եք, մի՛ տրտմեցրեք այն Հոգին, որ բնակվում է ձեր մեջ, որովհետեւ դուք չեք լինի Աստծո տաճարներ, այլ կլինեք սովորական մի վայր, որտեղ թե՛ վատ եւ թե՛ լավ բաները տեղ կգտնեն իբրեւ հասարակ մի վայրում» (Հմմտ. Ա. Կորնթ. Զ. 19):

Դուք ամենքդ սովորություն ունեք տաճար մտնելու, մոմ վառելու, աղոթք անելու, բայց ձեզանից քչերը, միգուցե, անդրադառնան, որ այդ տաճարի հոգեւոր իմաստը, ներքին բովանդակությունը նախ եւ առաջ իր մաքրությամբ, իր վեհությամբ այնպես, ինչպես դուք այսօր տեսնում եք, մեր հոգու մեջ արտացոլվելն է: Ի՞նչ եք կարծում՝ կունենայի՞նք արդյոք միջնադարյան գեղեցիկ, շքեղ վանական համալիրներ ու տաճարներ, որոնք այսօր աշխարհին են զարմացնում, եթե դրանք կառուցող ձեռքերը լցված չլինեին հոգեւոր եռանդով, եթե դրանց մեջ աղոթող մտքերը չլինեին Կենդանի Աստծո տաճարներ, եթե դրանց մեջ բաբախող սրտերը չլինեին այդ տաճարի մեջ բոցավառվող խորաններ. երբեք եւ երբեք: Այն, ինչ այսօր ընկալում ենք նյութական իմաստով, այն, ինչ մեզ համար այսօր քաղաքական է, հասարակական ու նյութական, մեզ՝ քրիստոնյաներիս համար, չունի որեւէ արժեք, եթե նախ չի սրբագործվում մեր հոգու տաճարի խորանի վրա, չի անցնում նախ Քրիստոսի խորհրդական Մարմնի միջով, որովհետեւ այդ տաճարը Քրիստոսի խորհրդական Մարմինն է, որի մաս ենք մենք ամենքս: Եւ եթե մենք մեզ չենք համարում այդ մարմնի մի մաս՝ խորհրդավոր մի մասնիկ անհրեւույթ, բայց հոգեւոր այդ տաճարի մի քար, հետեւաբար մեզ մնում է միայն խառնվել այն սովորական նյութական, պարզ

քարերին, որոնցից կարող են կառուցել թե՛ տաճարներ, թե՛ մեհյաններ, թե՛ պարզապես շինություններ, որոնք երբեք չեն լինի սրբված եւ չեն լինի աղոթքի ու հոգեւոր խորհրդածության կենդանի տաճարներ:

Սիրելինե՛ր, այս ամենը մեր մտքում լավ պահենք, արձանագրենք, որ ամենքս Կենդանի Աստծո տաճարներ ենք. մեծ շնորհ եւ միեւնույն ժամանակ մեծ պարտականություն է մեզ տալիս Աստված ու ասում. «Ահավասիկ ես նրանց մեջ պիտի ապրեմ եւ նրանց միջով պիտի գնամ» (Հմմտ. Ղեւտ. ԻԶ. 12):

Պատկերացրեք մի պահ, որ Աստված այստեղ ներկա է մեր մեջ, եւ ոչ միայն այստեղ, այլեւ մեր հոգու ներսում, պատկերացրեք մի պահ, որ Աստված ոչ թե երկնքից ահեղ դատավորի հայացքով է ձեզ հսկում, ձեր բոլոր գաղտնի, թաքուն մտքերը կարդում, այլ նախ եւ առաջ բազմած է ձեր հոգու մեջ, ձեր մտքի մեջ՝ իբրեւ ձեզ հոգեւոր ժառանգություն տվող եւ ձեզ անչափ սիրող Հայր:

Սիրելինե՛ր, Պողոս առաքյալի այս պատգամը մեզ համար այսօր առավել քան արդիական է: Նյութականացման, նյութի եւ ընդհանրապես նյութի հետ առնչվող ամեն ինչի սրբագործման այս դարում, երբ կարծեք թե նյութն առավել չափով մարդու համար դառնում է Աստծուն համարժեք, մարդու ներքին արժեքը՝ իբրեւ հոգեւոր տաճար, իբրեւ Աստծո հոգեւոր ժառանգության մի մասնիկ, կորչում է: Եւ շատ հաճախ չենք անդրադառնում, որ նյութականի հետեւից մեր վազքի ընթացքում՝ ամենատարբեր քաղաքական ու սոցիալական խնդիրների լուծման ապարդյուն ջանքերի հետեւից, կորցնում ենք այն, ինչ կոչվում է մարդկային հոգի:

Համաձայն եմ, որ երբեմն թե՛ դուք, թե՛ մենք ազնիվ չենք մեր ծառայության մեջ, ազնվաբար եւ անձնվիրաբար չենք տանում Տիրոջ խաչը, երբեմն խաբում ենք ինքներս մեզ, խաբում ենք եւ ձեզ, բայց մենք ամենքս Աստծո կենդանի տաճարն ունենք մեր ներսում. պիտի մատուցենք այն անարատ ու բանական զոհը, որ Պողոս առաքյալի խոսքերով՝ մեծագույն եւ գերագույն առաքինությունն է, որը կարող է ձեռք բերել քրիստոնյան:

Եկե՛ք, ուրեմն միասին ամփոփենք մեր խորհրդածությունը եւ աղոթենք այսպես. «Ո՛վ բարերար Տեր, տո՛ւր իմ հոգուն ամուր սյուներ, որպեսզի քո տաճարի գմբեթը մնա անսասան, տո՛ւր իմ սրտին մաքրություն, որպեսզի դրա խորանի վրա անվերջ մատուցվի քո ընծան, եւ տո՛ւր իմ մտքին անվերջ ու անընդհատ խորհրդածություն, որպեսզի երբեք չմարի այդ ընծայի բորբոքող կրակը»:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեսանդ. ամէն: